ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 01-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 63-րդ և 65–րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ- 0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 20-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 56-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
2. <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին>> համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 54-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3. Տաթև համայնքի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով <<ԱՊՐԵԼՈՒ>> բարեգործական հիմնադրամի և Տաթև համայնքի միջև կնքված համաֆինանսավորում կատարելու և հուշագրով սահմանված գումարի 2022 թվականին չօգտագործված մասը որպես եկամուտ և համապատասխան ծախս համայնքի 2023 թվականի բյուջեում սահմանելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 02-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1–ին հոդվածի դրույթով, համաձայն Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ- 0, ձեռնպահ- 0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման 1-7-րդ կետերով սահմանված N 1- N 7 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման 1-7-րդ կետերով սահմանված N 1- N 7 հավելվածներում կատարվող փոփոխությունները պայմանավորված են « Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, ըստ որի 2023 թ-ի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանվել է 75000 ՀՀ դրամ:

Գլխավոր մասնագետ՝ **Ա. Հովակիմյան**

17.01.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2091-Ա որոշումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 279526.1 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 328858.2 հազար դրամ» բառերով:

1.2. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ» բառերը փոխարինել «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 49332.1 հազար դրամ» բառերով:

1.3. Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի:

1.4. Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:

1.5. Որոշման 5-րդ կետի 4-րդ հատվածում (համայնքի բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 4-ի:

1.6. Որոշման 6-րդ կետի 5-րդ հատվածում (համայնքի բյուջեի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 5-ի:

1.7. Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 6-ի:

2. Տաթև համայնքի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից Տաթև համայնքի 2022 թվականի բյուջեին տրամադրվող նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսումը տեղափոխել՝ Տաթև համայնքի 2023 թվականի բյուջե՝ ըստ ծրագրերի նախատեսելով համապատասխան եկամուտ և ծախս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հաշվի առնելով համայնքի բյուջեի տարեսկզբի փաստացի ազատ մնացորդը՝ 49332135.3 դրամ /վարչական մասում՝ 23214746.7 դրամ և ֆոնդային մասում՝ 26117388.6 դրամ/, 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի շարունակելու և ավարտելու պարտավորությունը, ինչպես նաև 2023 թվականին նախատեսվող սուբվենցիոն ծրագրերը և համյանքի ընթացիկ աշխատանքները՝ ՀՀ Բյուջետային համակարգի մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի ա, և բ, ենթակետերի համաձայն անհրաժեշտ է վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդց՝ 1093000.0 ՀՀ դրամը ուղղել նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների մարմանը, իսկ 22121746.7 ՀՀ դրամը ուղղել ֆոնդային մաս և բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները.

ա/ 01.1.1 ծրագրի 4212 հոդվածն ավելացնել 1015,030 հազար ՀՀ դրամով՝ Էներգետիկ ծառայության,4213 հոդվածին՝42.140 հազար ՀՀ դրամով կոմունալ ծառայությունների, 4214 հոդվածին 35.830 հազար ՀՀ դրամով կապի ծառայությունների 2022 թ-ի դեկտեմբեր ամսվա վճարները ապահովելու նպատակով, 5122 հոդվածն ավելացնել 2000.0 հազար ՀՀ դրամով՝ համակարգչային սարքավորումների և անհրաժեշտ այլ գուքի ձեռքբերման նպատակով:

բ/ 04.2.4 ծրագրի 5112 հոդվածն ավելացնել 15726.430 հազար ՀՀ դրամով՝ համայնքի Հալիձոր բնակավայրում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների նպատակով: ***/Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում /:***

գ/06,3,1 ծրագրի 5112 հոդվածն ավելացնել 4950,0 հազար դրամով՝ համայնքի Հարժիս բնակավայրում կոյուղու ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և փորձաքննության նպատակով: ***/Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում /:***

դ/ 06.4.1 ծրագրի 5112 հոդվածն ավելացնել 12505,060 հազար ՀՀ դրամով՝ Տաթև համայնքի վարչական տարածքով անցնող Հ-46 հանրապետական ու միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի երկայնքով գիշերային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման նպատակով:***/Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում /:***

ե/ 09,1,1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 9315.430 հազար ՀՀ դրամով,որից՝8620.430 հազար ՀՀ դրամը Շինուհայր բնակավայրի ՆՈՒՀ-ի մեկ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների, իսկ 695.0 հազար ՀՀ դրամը Տաթև բնակավայրի ՆՈՒՀ-ի մեկ հատվածի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, 5112 հոդվածն ավելացնել 2085.270 հազար ՀՀ դրամով,որից 931.190 հազար ՀՀ դրամը Շինուհայր բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի էներգիայի սնուցման նպատակով 50.6 ԿՎԱ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման նպատակով, 400.850 հազար ՀՀ դրամը Հալիձոր բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի էներգիայի սնուցման նպատակով 20 ԿՎԱ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, 377.540 հազար ՀՀ դրամը Խոտ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի էներգիայի սնուցման նպատակով 20.35 ԿՎԱ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, 375.690 հազար ՀՀ դրամը Տաթև բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի էներգիայի սնուցման նպատակով 20.35 ԿՎԱ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով,***/Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում /:***

զ/ 09.5.1 ծրագրի 5113 հոդվածն ավելացնել 1228.0 հազար ՀՀ դրամով՝ համայնքի Ծինուհայր բնակավայրի Երաժշտական դպրոցի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության

խորհրդատվական և նախագծանախահաշվային փաստաթղթերի հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, 5112 հոդվածն ավելացնել 428.910 հազար ՀՀ դրամով՝ համայնքի Ծինուհայր բնակավայրի Երաժշտական դպրոցի շենքի էներգիայի սնուցման նպատակով 20.35 ԿՎԱ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով, ***/Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում /:***

Գլխավոր մասնագետ՝ **Ա. Հովակիմյան**

17.01.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում բյուջեի եկամտային մասը չի փոխվի՝կկազմի 279526100 (երկու հարյուր յոթանասունինը միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ ծախսային մասը կկազմի՝ 328858200 (երեք հարյուր քսանութ միլիոն ութ հարյուր հիսունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) կկազմի՝ 49332100 (քառասունինը միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որից 1093000 (մեկ միլիոն իննսուներեք հազար) ՀՀ դրամը վարչական մասում իսկ 48239100(քառասունութ միլիոն երկու հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը ֆոնդային մասում:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կազմում է 17709 000 (տասնյոթ միլիոն յոթ հարյուրինը հազար) ՀՀ դրամ:

Գլխավոր մասնագետ՝ **Ա. Հովակիմյան**

17.01.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 04-Ա

ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԱՊՐԵԼՈՒ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱԽՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածով, հիմք ընդունելով Տաթև համայնքի և <<Ապրելու>> բարեգործական հիմնադրամի միջև կնքված հուշագիրը և Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 20–ի թիվ 44–Ա որոշումը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8 , դեմ-0, ձեռնպահ-0 , ավագանին ***որոշում է***՝

1. Տաթև համայնքի և <<ԱՊՐԵԼՈՒ>> բարեգործական հիմնադրամի միջև կնքված հուշագիրով սահմանված գումարից՝ 68788915 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար իննը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամը նվիրաբերությունը որպես եկամուտ սահմանել Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեում:

2. Սույն որոշման առաջին կետով սահմանված 68788915 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար իննը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամը նվիրաբերությունը ստանալուց հետո՝ համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել համապատասխան վերաբաշխումներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Պայմանավորված Տաթև համայնքի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով «ԱՊՐԵԼՈՒ» բարեգործական հիմնադրամի և Տաթև համայնքի միջև կնքված համաֆինանսավորում կատարելու մասին հուշագրի առկայությամբ և հուշագրով սահմանված նվիրաբերության գումարի մի մասի 2022 թվականին չօգտագործված լինելու փաստից՝ անհրաժեշտություն է առաջանում, համայնքի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացումն ավարտին հասցնելու նպատակով հուշագրով սահմանված նվիրատվության գումարից 68788915(վաթսունութ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամը որպես եկամուտ և համապատասխան ծախս սահմանել համայնքի 2023 թվականի բյուջեում:

Տաթև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Մարատ Գերասիմյան

«17» հունվար 2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում բյուջեի եկամտային և ծախսային մասերը համապատասխանաբար կավելանան 68788915(վաթսունութ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամով:

Գլխավոր մասնագետ՝ Ա. Հովակիմյան

«17» հունվար 2023թ.